600.0376.14.10.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2020 թվականի №376Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N238Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների, աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար սոցիալական ծրագրի իրականացման և միանվագ դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» №238Լ որոշման 1-ին կետով հաստատված՝

1) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-րդ կետով.

«**8.1** Սոցիալական ծրագրի իրականացման շրջանակում հատկացվող գումարը Աշխատակցի հայեցողությամբ ամբողջությամբ կամ մասնակի կարող է փոխանցվել «Հայաստան» համահայկական հիմնադրամին:».

2) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.3-րդ կետով.

«**12.3** «Հայաստան» համահայկական հիմնադրամին գումար փոխանցելու համար Աշխատակիցը լրացնում է հայտ և ներկայացնում Ստորաբաժանում:».

3) Կարգի 14-րդ կետում «կազմակերպության» բառից հետո ավելացնել «կամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի» բառերը.

4) Կարգի №1 հավելվածի նախաբանի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույնով տեղեկացնում եմ, որ նպատակ ունեմ՝

- Սոցիալական ծրագրի իրականացման շրջանակում ինձ հասանելիք գումարը ամբողջությամբ կամ մասնակի փոխանցելու «Հայաստան» համահայկական հիմնադրամին ☐,
- Օգտվելու Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի №238Լ որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով սահմանված հետևյալ ծառայությունից (ծառայություններից).».

5) Կարգի №1 հավելվածում «փոխհատուցման» բառից հետո լրացնել «կամ «Հայաստան» համահայկական հիմնադրամին փոխացման» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
14 հոկտեմբերի 2020թ.